



# Բարեկամական համերգ Չալթրում



Անցած շնբաթվա ընթացքում Դոնի Ռոստովում անցկացվեց 14-րդ միջազգային փառատոնը, որին մասնակցեցին հանրաճանաչ համույթներ Հայաստանից, Ռուսաստանից, Բելոռուսիայից և Լատվիայից:

Փառատոնի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-ին Ժողովրդական ստեղծագործության մարզային տանը: Մեծաթիվ հանդիսատեսների ուշադրությանը ներկայացվեցին խաղաղասիրության, մարդասիրության և բարեկամության գաղափարներով տոգորված ստեղծագործություններ:

Հաջորդ օրերին փառատոնի մասնակից խմբերը ելույթներ ունեցան Ռոստովի մարզի տարբեր քաղաքներում և շրջաններում:

Սեպտեմբերի 10-ին Չալթր այցելեց Հրնկդան քաղաքի "Նինար" համույթը Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Մանվել Ռաֆայելյանի ղեկավարությամբ: Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր այդ կոլեկտիվը իր գործունեության 30 տարիների ընթացքում անցել է ստեղծագործական փառավոր ուղի և ամենուրեք արժանացել ջերմ ընդունելության::

Մյասնիկյանի շրջանի մշակույթի աշխատողների ուղեկցությամբ հյուրերը այցելեցին պատմա-ազգագրական թանգարան և մեծ հետաքրքրությամբ ծանոթացան ցուցանմուշներին ու լսեցին էքսկուրսավարի պատմությունը: Ապա նրանք եղան Չալթրի Սուրբ Համբարձում եկեղեցում և մոմեր վառեցին:

Իսկ երեկոյան Չալթրի "Հրազդան" կինո-համերգային դահլիճում հայաստանցիները ներկայացրին իրենց համերգային ծրագիրը: Մյասնիկյանցի խստապահանջ հանդիսատեսները ըստ արժանվույն գնահատեցին հյուրերի կատարողական արվեստի բարձր մակարդակը և նրանց ելույթները արժանացրին ջերմ ծափահարությունների: Ներկաների վրա հատկապես խոր ազդեցություն թողեցին երիտասարդ մեներգիչ, Երևանի պետական կոնսերվատորիայի ուսանող Արման Համբարձումյանի կատարած երգերը և դուդուկահար Հայկ Բավեյանի նվագած սրտաթով ու դուրեկան մեղեդիները:

Համերգի ավարտից հետո բեմ ելավ կուլտուրայի և երիտասարդական քաղաքականության Մյասնիկյանի շրջանային բաժնի պետ Մանուշակ Չուբարյանը և ներկաների անունից ջերմ շնորհակալություն հայտնեց հյուրերին ճոխ համերգի ու ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդման գործում իրենց ավանդը ներդնելու համար: Ապա նա խմբի ղեկավար Մանվել Ռաֆայելյանին հանձնեց պատվոգիր և մի յուղաներկ բնանկար:

*Նկարներում՝ պահեր համերգից:*
*Ֆոտոռեպորտաժ՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*









